# ԳԵՂԱՇԵՆԻ ՌԱԶՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| ԹԵՄԱ | |
|---|---|
| Նախագծի անվանում՝ | Ֆինանսական կրթության ինտեգրումը դպրոցում |
| Հիմնահարցը՝ | Ֆինանսական կրթության դերի և կիրառությունների կարևորությունը դպրոցում: Սովորողների կողմից ֆինանսական կրթության նկատմամբ հետաքրքրությունը խթանելու անհրաժեշտությունը: |
| Դպրոց՝ | Գեղաշենի Ռ.Ստեփանյանի անվան միջն. դպրոց |
| Առարկա՝<br>Ուսուցիչ՝ | Հանրահաշիվ<br>Գայանե Դավթյան |
| Ուսումնական տարի, կիսամյակ՝ | 2024-2025թ.թ. 2-րդ կիսամյակ |
| Դասարան՝ | 10 |
| Տևողություն՝ | 6 շաբաթ |
| Նախագծային աշխատանքին մասնակցում էին՝<br>—————10 մաթեմ———դասարան թիվ<br>————12—————աշակերտ | 12աշակերտ<br>1.Աղիբեկյան Վահե 6. Գինոսյան Մար<br>2.Ավագյան Ցանեկ 7. Դավթյան Էլեն<br>3.Բադալյան Տիգրան 8. Թարոյան Գոհար<br>4.Գալստյան Արփինե 9. Սարգսյան Էլեն<br>5.Գևորգըան Էլլա 10. Սարգսյան |
| Ուսումնական նախագծի իրականացման փուլերը՝ | • 1-ին փուլ՝ / 03.02.25թ./ Նախագծի ծրա<br>• 2-րդ փուլ՝ / 10.02.25թ./ Նախագծային<br>• 3-րդ փուլ՝ / 17.02.25թ./ Պատրաստի նյու<br>• 4-րդ փուլ՝ /24.02.25թ./ Աշխատանքների<br>• 5-րդ փուլ՝ /03.03.25թ./ Գիտելիքի ստուգ<br>• 6-րդ փուլ՝ /10.03.25թ./ Վերջնական արդ |
| Տեսակը՝ | Գործնական |
| Կիրառված ճնաչափը՝ | Գործնական, |

| | |
|---|---|
| | Հետազոտական,<br>Վերլուծական |
| Ըստ բովանդակության՝ | ***Ուսումնական նախագծի արդյունքում սովորողները ձեռք կբերեն ֆինանսական*** *գիտելիքներ, գործնականում կկիրառեն, կզարգանա հետազոտական, վերլուծական, ստեղծագործական և համագործակցային հմտությունները:* |
| Ըստ վերջնարդյունքի՝ | Սահիկաշար,պաստառ,բուկլետներ |
| Ըստ խմբերի՝ | 1.**Տեսական խումբ**:<br>• **Հետազոտել և ամփոփել թեմաների հիմնական սահմանումները, օրենքները և բանաձևերը**:<br>• **Պատրաստել կարճ ներկայացումներ կամ բացատրական**<br>• 2. **Փորձարարական խումբ**:<br>• **Գտնել կամ մշակել տվյալ թեմաներին համապատասխան նյութեր**<br>3. **Ձևավորման և տեխնիկական աջակցման խումբ**:<br>• **Զբաղվել սահիկաշարի տեսքի ձևավորմամբ և պահպանմամբ**:<br>• **Տեղադրել խմբերի կողմից պատրաստված նյութերը համապատասխան հարթակում, ապահովել տեխնիկական անխափան աշխատանքը**: |
| Ըստ տևողության՝ | 6 շաբաթ |
| Ուսումնական նախագծի հետազոտության աղբյուրները | Դասագիրք, ըստ անհրաժեշտության տարբեր կայքեր, համապատասխան |

| | |
|---|---|
| | գրականության աղբյուրներ: |

## Ոււումնական նախագծի նպատակը՝

- Սովորողներին տրամադրել բազային ֆինանսական գիտելիքներ՝ կապված եկամուտների, ծախսերի, խնայողությունների,վարկերի և ներդրումների հետ:
- Սովորեցնել աշակերտներին կայացնել պատասխանատու և իրազեկված ֆինանսական որոշումներ՝ հիմնվելով վերլուծության և երկարաժամկետ պլանավորման վրա:
- Առողջ ֆինանսական սովորությունների զարգացում, ինչպիսիք են բյուջեի կազմումը, խնայողությունները, ռիսկերի գնահատումը:
- Նվազեցնել ֆինանսական սխալների հնարավորությունը:
- Սովորեցնել աշակերտներին աշխատել խմբերով:
- Տրամադրել աշակերտներին հմտություններ և գիտելիքներ, որոնք կօգնեն հետագայում աշխատաշուկայում ավելի մրցունակ լինել:

Զարգացնել սովորողների ինքնուրույնությունը:

## Ուսումնական նախագծի վերջնարդյունքները

ՀԴՉ

Հ7.Որոշի խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկույթը, գտնի խնդիրների լուծման ստեղծագործ մոտեցումներ և համեմատի դրանք.

Հ20. վերլուծելով ֆինանսական տեղեկությունը՝ կարողանա համեմատել ֆինանսական ծառայություններ և կազմակերպություններ: Ճանաչի ֆինանսական ոլորտում քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները.

Հ26. ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ

Հ27.բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ.

Հ28. դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.

Հ29. ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.

Հ31. արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը.

Հ32. արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.

## Ուսումնական նախագծի նկարագիրը՝

Առաջին շաբաթը աշակերտները կայցելեն ՀՀ Կենտրոնական բանկ, որից հետո իրենց ստացած արդյունքները վերլուծելով կստանանք առաջին շաբաթվա ստացած գիտելիքների պատկերը:

Երկրորդ շաբաթվա ընթացքում աշակերտները կպատրաստեն օնլայն հարցումներ, որի միջոցվ կփորձեն պարզել քաղաքացիների ֆինանսական կրթվածության աստիճանը։
Երրորդ շաբաթվա ընթացքում աշակերտները հետազոտելու են տարբեր արժույթների տատանումները և կազմելու են գրաֆիկներ։
Չորրորդ շաբաթվա ընթացքում սովորողները ծանոթանալու են կրիպտոարժույթների և դրանց տեսակների հետ։
Հինգերորդ շաբաթվա ընթացքում կքննարկեն դպրոցում ֆինանսական կրթության ինտեգրման կարևորությունը։
Վեցերորդ շաբաթվա ընթացքում, աշակերտները վերլուծելով իրենց կատարած հետազոտությունները կպատրաստեն տեսաաhիկ։
Աշակերտներն ինքնուրույն պետք է կազմեն հարցեր օնլայն հարցումների համար
Հետևեն և գրանցեն արժույթների տատանումները, ստացված արդյունքների հիման վրա կազմեն աղյուսակներ և դիագրամներ։ Համացանցից օգտվելով գտնեն տարբեր նյութեր կրիպտոարժույթների վերաբերյալ, ծանոթանալ գրաֆիկներին հետազոտել գրաֆիկների տատանումները։ Տան իրենց կարծիքը ֆինանսական կրթության դպրոցում ինտեգրվելու կարևորության վերաբերյալ։ Պատրաստեն տեսաաhիկ կատարված վերլուծությունների հիման վրա։

Ուսուցիչը ներկայացնելու է աշխատանքի բովանդակությունը, կատարման սկզբունքները, պահանջները, հաջողության ուղենիշները, նպատակները և վերջնարդյունքները։ Ընդգծվելու է համագործակցային մթնոլորտում աշխատելու կարևորությունը, դիտարկվելու է կատարված աշխատանքը ներկայացնելու ձևը, բովանդակությունը, ինքնաանդրադարձ և ամփոփում կատարելու անհրաժեշտությունը։ Առաջադրանքի կատարման համար աշխատելու են խմբով՝ որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն կունենա ընտրելու այն դերը, որ ստանձնելու է նախագծային աշխատանքի ընթացքում:

## Կարողունակություններ, որոնք զարգացել են այս նախագծի ընթացքում

լեզվական գրագիտություն և կարողունակություն.
սովորել սովորելու կարողունակություն.
ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
թվային և մեդիա կարողունակություն.
մշակութային կարողունակություն.
մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն

## Սովորողների ձեռքբերած կարողունակություններն ու վերջնարդյունքները

Օգտագործեցին ունեցած գիտելիքները և հմտությունները

Ծանաչեցին որոշֆինանսական տերմիններ::
Դրսևորեցին տրամաբանական և ստեղծագործական մտածողությու:
Դրսևորեցին մտավոր և ֆիզիկական կարողությունները

| |
|---|
| |
| Իրականացված միջառարկայական կապեր |
| Հայոց լեզու,Հասարակագիտության |
| Ուսումնական նախագծի վերջնարդյունքների ներկայացված տեսակները |
| Պաստառ:Սահիկաշար,բուկլետներ |